Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝Սաների հայրենաճանաչողության կարևորությունը**

**Դաստիարակ՝ Նարինե Բեջանյան**

**Մ**

**ա**

**ն**

**կ** **թ.**

**ա**

**պ**

**ա**

# Բովանդակություն

Ներածություն----------2

Գլուխ 1

Տեսական մաս----------3

Գ

Գլուխ 2

Գործնական մաս----------12

Եզրակացություն----------15

Գրականության ցանկ----------17

# Ներածություն

Նախադպրոցական տարիքը լավագույն շրջանն է  երեխայի անհատականության ձևավորման համար:Ձևավորվում է երեխայի  աշխարհայացքը,նրա վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Նախադպրոցական տարիքը նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար,քանի որ հենց այս շրջանում է երեխայի մոտ տեղի ունենում մշակութային և արժեքային կողմնորոշումների ձևավորումը:Բարենպաստ տարիք է երեխայի վրա հուզական և հոգեբանական ազդեցության համար:Երեխաները սովորում են ընկերասիրություն,հարգանք միմյանց նկատմամբ,ազնվություն,հուզականորեն իրա-դարձություններին արձագանքելու կարողություն: Ծանոթանում են շրջակա միջավայրին,ձեռք են բերում հմտություններ:Երեխաները ծանոթանում են ազգային ավանդույթներին,սովորույթներին,մասնակցում հայրենասիրական միջոցառումների,ազգային  տոնակատարություններին: Գեղարվեստական գրականության,արվեստի միջոցով ձևավորվում է երեխայի հայրենաճանաչողությունը:Հայրենաճանաչողության ձեւավորման մեջ իրենց արդյունավետությունն ունեն նաև էքսկուրսիաները,նպատակային զբոսանքները,մշակութային այցերը,որոնք ավելի պատկերավոր,նկարագրական են դարձնում նախադպրոցականների պատկերացումները հայրենիքի,հայրենասիրության մասին:,«Սաների հայրենաճանաչողության կարևորությունը» հետազոտական թեման առավել քան արդիական է մեր օրերում: Թեմայի կարևորագույն նպատակն է ուսումնասիրել երեխաների հայրենաճանաչողության դաստիարակության մեթոդները նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Խնդիրներն են՝

Տարբեր մեթոդների միջոցով բարձրացնել սաների հայրենաճանաչողության մակարդակը:

Սաներին ծանոթացնել մշակութային արժեքներին:

Երեխաների մեջ սերմանել հայրենասիրական զգացումներ: Այսպիսով՝ վերլուծելով ներկայիս իրավիճակը պարզ է դառնում ,որ հին ու նոր սերունդների արժեհամակարգերի միջև առաջանում է անդունդ:Նոր սերունդը կտրվում ,հեռանում է իր արմատներից,չի նախագծում իր հեռանկարները և ապրում է լոկ ներկայով:Ուստի անհրաժեշտ է նախադպրոցական ուսումնական հաստատություններից սկսած լրջագույն մոտեցում ցուցաբերել հայրենաճանաչողության դաստիարակության խնդիրների լուծմանը:Ստեղծված իրավիճակում միայն հայրենաճանաչողությունը կօգնի դիմակայելու գաղափարական բոլոր արհավիրքներին:

# Գլուխ 1

# Տեսական մաս

*Հայրենիքը չի տրվում այնպես,ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը:Դա ձեռք է բերվում ամեն մի սերնդի և նրա առանձին անդամի կողմից:Ձեռք է բերվում հայրենաճանաչումով,հայրենապաշտությամբ,նրան արժանի դառնալու ձգտումով:*

*Գ.Նժդեհ*

Այս մեծ աշխարհի մի փոքրիկ անկյունում գտնվում է մեր հայրենիքը՝Հայաստանը :Գեղեցիկ բնությունը,հազարամյա պատմությունով ու հարուստ մշակույթով:Այս երկիրը դարերի ընթացքում անցել է ամենադժվար փորձությունների միջով,բայց միշտ մնացել է կանգուն:Շատ թշնամիներ են փորձել ոչնչացնել Հայաստանն ու մինչ այսօր էլ փորձում են:Թեև փոքր է մեր հայրենիքն ու փոքր ազգ ենք,բայց մեծ պատմություն ունենք ,բարձր մարդկային արժեքներ:

Քիչ ենք,այո ,բայց դարերի ընթացքում կարողացել ենք պահպանել մեր ազգը,կրոնը,մեր գիր ու գրականությունը,մեր մշակույթն ու թույլ չենք տվել ոչ ոքի խլել մեզանից այդ հարստությունը,երբեք չենք կորցրել հույսն ու հավատը,մեր մարդկային արժեքները,որոնք սերնդից սերունդ փոխանցվել է հայ ազգի զավակներին:Այսօր էլ ծնվում են հայ երեխաներ,հայ ազգին արժանի զավակներ,ովքեր իրենց մեծերից վերցնելու են զենքը պատիվ ու հայրենիքը պաշտպանելու համար:Հայրենիքի նկատմամբ պարտքը մարդու սրբությունն է:Հայրենասիրությունն անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է,անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա

զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ակտիվ գործունեությամբ ի բարօրություն հայրենիքի:Յուրաքանչյուրիս համար հայրենիքն

սկսվում է հայրական տնից

ծննդավայրից,քաղաքից,գյուղից,փողոցից,մանկապարտեզից:Մեզանից՝ հայրերից ու մայրերից ,դաստիարակներից է կախված,որպեսզի

երեխան,պատանին,քաղաքացին փայփայիր այդ սրբությունը:Ինչպես ազնիվ մարդը կփայփայի իր բարի անունը,իր ընտանիքի արժանապատվությունը:Պետք է հասնել այն բանին,որ սանին դեռ մանկուց հուզի հայրենիքի ներկան ու ապագան:Հայրենասիրական դաստիարակության մասին Կոմենսկին գրել է.

Հայրենասիրական դաստիարակության մեջ կարևորագույն խնդիրներից է մարդկանց օգնելու ձգտում սերմանելը:Միայն այն ժամանակ երջանիկ օրեր կգան մեզ համար ,եթե բոլորը գործեն հօգուտ համընդհանուր բարօրության»:Հայ ժողովրդի պատմությունը լի է ամենածանր ժամանակներով,երբ դրված է հայի լինել չլինելու հարցը:Այսօր էլ հայ ժողովուրդն ապրում է իր պատմության ճակատագրական պահերից մեկը:Այս պայմաններում ռազմավարական նշանակություն է ձեռք բերում կրթությունը:Ազգային ինքնության պահպանման,ազգային մշակույթի,ավանդույթների փոխանցման գործում մեծ է ընտանիքի՝ որպես առաջին սոցիալականացման ինստիտուտի դերը: Երկրորդ ինստիտուտը նախադպրոցական ուսումնական հաստատությունն է:Կարևոր է հենց նախադպրոցական տարիքից երեխաներին հաղորդակից դարձնել ազգային մշակույթին:Յուրացնելով իր մայրենի լեզուն, ծանոթանալով իր ազգային արժեքներին,ավանդույթներին,սովորույթներին՝ անձը դառնում է էթնոկիր:Նպատակահարմար է ,որ երեխաների մոտ վաղ մանկության շրջանում դրական հույզերի,գեղեցիկի զգացում,հետաքրքրասիրություն առաջացնող առարկաներն ունենան ազգային բնույթ,պարունակեն ազգային տարր:Երեխաների դաստիարակության գործընթացում շատ կարևոր է օգտագործել ազգային,ժողովրդական ստեղծագործություններ՝ հեքիաթներ

ասույթներ,առակներ, որոնցում վառ կերպով դրսևորվում են բարին,գեղեցիկը, ճշմարտասիրությունը,հավատարմությունը,աշխատասիրությունը,ազգային պատկանելությունը: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում և

ընտանիքներում երեխաներին պետք է հաղորդակից դարձնել ազգային ավանդույթներին,տոներին:Դաստիարակչական աշխատանքներում խորհուրդ է տրվում կազմակերպել միջոցառումներ՝ կապված հայրենի երկրի,հողի,ջրի,բնության,կենդանական աշխարհի,հասարակական կյանքի տարբեր կողմերի հետ,որոնք բնորոշ են մեր բնաշխարհին,մեր հասարակությանը,մեր ազգին: Անհրաժեշտ է նախադպրոցական ուսումնական հաստատություններու հայրենաճանաչողության դաստիարակությունը իրականացնել երգեցողության,պարի,թատրոնի մանկական գրականության,ձեռքի աշխատանքի միջոցով:Երեխաների մոտ ձևավորվում է շրջապատող աշխարհն ազգային ավանդույթներին,մտածելակերպի համապատասխան ակտիվորեն,ստեղծագործական վերափոխելու պահանջմունք,կարողություն,պատրաստակամություն: Հայրենաճանաչողության դաստիարակության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է դաստիա-րակների ,մանկավարժական ողջ կոլեկտիվի աշխատանքի նպատակաուղղվածությամբ,պլանավորման,նախագծման և իրագործման մակարդակով,մեթոդական պատրաստվածությամբ: Հայրենասիրության դաստիարակության գործում մեծ է նաև ընտանիքի դերը:Անհրաժեշտ է կազմակերպել հատուկ պայմաններ :Տալ երեխաներին վառ հայրենասիրական կերպարներ ընկալելու հնարավորություններ,դիդակտիկ նյութեր,որոնք կնպաստեն նախադպրոցականների մոտ դրական հույզերի և զգացմունքների ձևավորմանը:: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կարելի է առանձնացնել մի անկյուն և այն կահավորել հայկական կոլորիտով, հայկական կենցաղին բնորոշ իրերով :Նման աշխատանքների կազմակերպմանը պետք է մասնակցեն նաև ծնողները:Շատ արդյունավետ կլինի,որ այդ հայկական անկյունում կազմակերպվեն դերային խաղեր,ընտանեկան ավանդույթներին վերաբերվող սյուժեներ:

Կարելի է նաև պատրաստել հայկական խոհանոցի ճաշատեսակներ:Այս ամենը կազմակերպելու ,իրականացնելու համար դաստիարակները պետք է լավ իմանան

հայկական սովորույթները,կենցաղը ,խոհանոցը:Արդյունքում երեխաների մոտ առաջանում է հետաքրքրասիրություն ազգայինի նկատմամբ,զարգանում է հայրենասիրության գաղափարը,էթնիկական պատկանելիության զգացում:

# Գլուխ 1.1

**Հայրենաճանաչողության մակարդակի բարձրացման մեթոդներ**

Էքսկուրսիան դիտվում է,որպես ուսուցման կազմակերպման յուրահատուկ ձև աշխարհաճանաչողության,գիտելիքների հաղորդման միջոց:Էքսկուրսիայի միջոցով հաղորդվող գիտելիքների յուրացումը լինում է առավել կայուն ու խոր,իսկ պարապմունքի ընթացքը ավելի աշխույժ ու հետաքրքիր:Իրական աշխարհի օբյեկտիվ ճանաչողությունը սկսվում է զգայությունից:Հայտնի է,որ երեխաների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը:Ուստի զարգացման վաղ փուլերում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով,քան հասկացություններով: Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման առումով:Մեծ մանկավարժ ուշինսկին գտնում էր,որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի,իսկ միտքը զարգանում է,եթե մտքի,առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի:Ոչ մի կերպ հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել,որքան էքսկուրսիայի միջոցով:Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի իր երկրին,զգում է հայրենի բնության գեղեցկությունը և առավելապես է գնահատում ու սիրում հայրենի հողը:Երբեք չի կարելի էքսկուրսիաներին տալ երկրորդական դեր : Էքսկուրսիաների կազմակերպումը մեծ նշանակություն ունի հատկապես հայրենաճանաչողության դաստիարակության մեջ:

Դեպի բնություն կատարվող էքսկուրսիաների թեմաներ կարող են լինել,.

Մանկապարտեզի շրջակայքը»

Դեպի մեր գյուղը»

Դեպի հացի արտադրամաս»

Էքսկուրսիաները դեպի իրենց բնակավայրի տեսարժան վայրեր օգնում է ճանաչել հայրենի երկիրը և սեր արթնացնել բնության հանդեպ

Պարապմունք բնության գրկում»

Սովորեցնում է ճանաչել հայրենի բնությունը,նկատել նրա գեղեցկությունը:Բնության գրկում էքսկուրսիայի ընթացքում երեխան սովորում է հոգատար վերաբերմունք ցուցաբերել բնության նկատմամբ,պատասխանատվություն զգալ հայրենի հողի նկատմամբ:Էքսկուրսիայի արդյունավետ անցկացումը դաստիարակից պահանջում է նպատակի և աշխատանքի ճիշտ պանավորում,կազմակերպում և ստացված արդյունքների ամփոփում:Այս տեսակետից՝ էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել երեք հիմնական փուլերին.

ախապատրաստում
նցկացում
մփոփում

Էքսկուրսիայի ընթացքում երեխայի մոտ ձևավորվում են ճանաչողական կարողություններ,բարոյական մի շարք հատկանիշներ՝ ընկերասիրություն,կոլեկտիվին, փոխօգնության պատրաստակամություն,երեխաները ձեռք են բերում այնպիսի բնավորության գծեր, ինչպիսիք են՝հաստատակամությունը,համառությունը,դժվարությունները հաղթահարելու կամքի ուժը :

**Գեղարվեստական գրականության դերը հայրենաճանաչողության դաստիարակության մեջ:**

Հայրենաճանաչողության դաստիարակության մեջ մեծ նշանակություն ունի գեղարվեստական գրականությունը:Այն երեխային տալիս է հերոսականի

առաջին զգացողությունը,փորձության,վտանգի,ջանքերի և հաղթանակի զգացում,երեխայի մոտ ձևավորում է քաջություն և հավատարմություն:

Սովորեցնում է խորհել աշխարհի բարդության,ճշմարտության և կեղծիքի միջև եղած տարբերությունների մասին: Նախադպրոցականների բարոյական կրթություն ը թերի է առանց հայկական ժողովրդական հեքիաթի:Հեքիաթն անբաժան է գեղեցկությունից,նպաստում է գեղագիտական զգացմունքների,զարգացմանը:Հեքիաթը հայրենիքի նկատմամբ սեր դաստիարակելու կատարյալ,ոչ մի բանով չփոխարինվող աղբյուրն է:Հեքիաթի հայրենասիրական գաղափարը նրա  բովանդակության խորության մեջ է:Հեքիաթը հարազատ երկրի նկատմամբ դաստիարակում է սեր: Հեքիաթի ամեն մի բառը,ամեն մի կերպարը արտահայտում է հայրենի երկրի ,ժողովրդի կենսակերպը,մտածելակերպը,բնությունը,արժեհամակարգը:Երեխաները ակտիվորեն մասնակցում են հեքիաթի բեմականացմանը,որտեղ սովորում են լինել համարձակ,ազնիվ,հավատարիմ ու նվիրված:Ձեռք են բերում այնպիսի որակներ,որոնք կօգնեն նրանց դառնալ հայրենիքին նվիրված արժանի զավակներ :

**Գեղարվեստական-գեղագիտական պարապմունքների նշանակությունը**

Գեղարվեստական – գեղագիտական պարապմունքների ընթացքում երեխաներին ծանոթացնում ենք մշակույթի տարբեր տեսակների հետ:Այդ պարապմունքների ընթացքում երեխաները սովորում են ծեփել,նկարել:Դաստիարակներն օգտագործում են տարբեր հնարներ,պարապմունքի սկզբում ստեղծում են խաղային

իրավիճակներ,համեմատում,ոգեշնչում: Հայրենաճանաչողության մակարդակը բարձրացնելու համար դաստիարակներին խորհուրդ է տրվում երեխաներին առաջարկել այդ պարապմունքների ժամանակ նկարել ,ծեփել հայկական դրոշը,հայրենի բնաշխարհում ապրող կենդանիներ, բուսականություն:Նկարչության պարապմունքներին ծանոթացել հայ գեղանկարիչների

աշխատանքներին:Պատկերացում տալ քանդակագործության մասին,ծանոթացնել հայկական ճարտարապետությանը:Արդյունավետ է դեռ նախադպրոցական տարիքից երեխային ծանոթացնել հայրենի երկրի տեսարժան վայրերին,հուշարձաններին,պետական կառույցներին Գեղարվեստական – գեղագիտական դաստիարակության միջոցներից մեկը երեխաներին ժողովրդական երաժշտական արվեստին ծանոթացնելն է:Շատ կարևոր է երեխաներին ծանոթացնել հայկական երաժշտական գործիքներին:Երեխաների մոտ պատկերացում ձևավորել նրանց ստեղծման և ներկայացնել այն որպես ազգային նվագարան: Յուրաքանչյուր ազգ ունի իրեն բնորոշ երգերն ու պարերը,ինչպես ունի իր լեզուն,կենցաղը,սովորույթները:Հայ ազգային երգերն ու պարերը առանձնանում են ինքնատիպությամբ և բազմազանությամբ:Ազգային երգն ու պարը ցույց են տալիս տվյալ ազգի դիմագիծը,էությունը,ինքնությունը:Ահա ,թե ինչու է կարևոր դրանց իմացությունը:Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաներին սովորեցնում են ազգային,հայրենասիրական,ժողովրդական երգեր,որոնք երեխաները սովորում են և երգում միջոցառումների, տոնակատարությունների ժամանակ:Շատ կարևոր է,որպեսզի տոնական օրերին ճիշտ զարդարվի դահլիճը, որպեսզի երեխաների մոտ ձևավորվեն վառ պատկերացումներ, տպավորություններ տոնի վերաբերյալ: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կարևորվում է նաև ֆիզիկական պատրաստվածության պարապմունքների անցկացումը ժողովրդական ստեղծագործության տարբեր տեսակների օգտագործմամբ.

երաժշտական ռիթմիկ պարապմունքներ,երբ օգտագործվում են հայկական ազգային խաղեր

ճանաչողական խաղեր,որոնց ընթացքում նախադպրոցականները գիտելիք են ստանում ֆիզիկական կուլտուրայի խրոխտ քայլվածքի մասին:Երեխաների մոտ ձևավորվում է ճանաչողական կարողություններ քայլքի տեսակների մասին:

## Գլուխ 2

Գործնական մաս

Պարապմունքն անցկացնելուց առաջ կազմակերպել եմ այցելություն զորամաս:Զորամասում մեզ դիմավորել և ամբողջ շրջայցի ընթացքում մեզ ուղեկցել են բարձրաստիճան սպաներ:Առաջին հերթին,նրանք երեխաներին ուղեկցեցին շարահրապարակ՝որտեղ հանդիպում տեղի ունեցավ նորակոչիկների և երեխաների միջև:Հնչեց Հայաստանի հիմնը,բարձրացվեց հայկական դրոշը,ցույց տվեցին զինանշանը:Երեխաներին բացատրեցին,որ դրանք Հայաստանի ՀանրապետությանԽորհրդանիշներն են:Այնուհետև երեխաներին ծանոթացրին զենք -զինամթերքի,զինտեխնիկայի տեսակների հետ:Այցելեցինք հերոսների հուշարձան ,փոքրիկ մատուռում կազմակերպեցինք մոմավառություն:Զինվորական լսարաններից մեկում տեղի ունեցավ հանդիպում երեխաների և բարձաստիճան սպայական կազմի միջև:Երեխաների հետ տեղի ունեցավ զրույց հայրենիքի,հայրենասիրության և հայրենաճանաչողության կարևորության մասին:

## Ավագ խումբ

Թեմա՝ հայկական բանակ

Ծրագրային բաղադրիչ -ԽԶ

Նպատակը՝Ընդլայնել հայկական բանակի մասին պատկերացումները,դաստիարակել երախտագիտության զգացում և հարգանք զինվորի մասնագիտության նկատմամբ:

Վերջնարդյունք՝ուղղի համապատասխան հարցեր ՝տեղեկություններ ստանալու նպատակով:

Դիդակտիկ նյութեր՝հայկական բանակ,տարբեր տեսակի զորքեր պատկերող նկարներ,ազգային հերոսների նկարներ:

Կարողունակություն՝ժողովրդավարական և քաղաքացիական:

**Խ** –պարապմունքը սկսել հանելուկով

Որքան մեծ լինի

Ու որքան հզոր,

Այնքան թշնամին

Կլինի անզոր:

բանակ)

Երեխաներ,եկեք հիշենք ,թե էքսկուրսիայի ժամանակ ուր էինք այցելել ( զորամաս)

Ովքեր մեզ դիմավորեցին (  սպաները,զինվորները)

**Ի**_երեխաներ,բանակում կա մի շատ կարևոր մասնագիտություն, այն հայրենիքի պաշտպանի մասնագիտությունն է:Նրանք բանակում ծառայող սպաներն են,գեներալներն են՝բանակի սպայական կազմը:Բանակում ծառայում են զինվորները,ովքեր հագնում են հատուկ զինվորական հագուստ:Նրանց գործը

հսկել,պաշտպանել հայրենիքի սահմանները:Երեխաներին բացատրել,որ բոլոր տղաները ,երբ մեծանում են ,անպայման ծառայում են բանակում :Նրանք սովորում են կրակել,տանկ,զինվորական մեքենա վարել:Ծանոթանում են զինվորական տեխնիկայի այլ տեսակների հետ:Եկեք հիշենք ում նկարներն են փակցված

հերոսների անկյունում՝Մոնթեն,Վազգեն Սարգսյանը,Գարեգին Նժդեհը:Նրանք մեր ազգային հերոսներն են,ովքեր մեծ սխրանքներ են գործել,պաշտպանելով հայրենիքը:Հիշեք երեխաներ,բանակում ծառայելը դժվար,բայց պատվաբեր և պատասխանատու գործ է:

**Կ**_ովքեր էին հայրենիքի պաշտպանները,

Ովքեր էին զինվորականները,

Ինչ էին սովորում զինվորները բանակում,

Ինչպես էին անվանում  այն տղաներին,ովքեր նոր են եկել բանակ,

Ձեր մոտ ցանկություն առաջացավ ծառայել բանակում,

Ինչ զգացողություն ունեցաք ,երբ այցելեցիք զորամաս,

Կցանկանաք նմանվել մեր ազգային հերոսներին:

## Տնօրենի դիտարկումը

Պարապմունքը պլանավորված էր,ձևակերպված էր պարապմունքի թեման,նպատակը,քայլերը և վերջնարդյունքները:Քայլերը բխում էին սահմանված նպատակից,փոխկապակցված էին:Դաստիարակը մոտիվացիա էր ստեղծում սաների մեջ և խթանում նրանց հետաքրքրությունը,պարապմունքի ընթացքում պահպանվում են բոլոր փուլերի սահուն հերթագայումները:Դաստիարակն ապահովում էր հետադարձ կապ յուրաքանչյուր սանի հետ և սանի ներգրավվածությունը պարապմունքի ընթացքում:Հարգանքով է վերաբերվում բոլոր սաներին,արձագանքում է սաների կարիքներին:Դաստիարակի և սաների կողմից ապահովվում էր դրական հուզական միջավայր պարապմունքի ընթացքում:Դաստիարակը հասավ իր նպատակին և տեղավորվեց ժամանակի մեջ:

## Եզրակացություն

Այսպիսով՝  ամփոփելով <<Սաների հայրենաճանաչողության կարևորությունը>>հետազոտական թեման եկա այն եզրակացության ,որ անհնար է մերժել,թերագնահատել,չարժևորել հայրենաճանաչողության դերն ու

նշանակությունը նախադպրոցական հաստատություններում:Հայրենասիրությունը դա վեհագույն արժեք է:Հզոր պետություն  ունենալու համար նախ պետք է հզորացնել սերնդի ինքնա-գիտակցությունը,ընդլայնել նրա աշխարհայացքը: Սաների ինքնաճանաչողության հիմքերը դրվում են հենց մանկապարտեզում դեռևս կրտսեր տարիքից,երբ երեխան ճանաչում է իր տունը,իր ընտանիքը,իր մանկապարտեզը,իր փողոցն ու գյուղը:Յուրաքանչյուր նախադպրոցական հաստատության կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի այն,որ սաների արժեհամակարգի ձևավորման մեջ իր կարևորագույն  տեղն ունենա: հայրենասիրության թեման Սակայն ուզում եմ նշել,որ հայրենասիրությունը առանձին թեմա չէ,այն արտահայտված է նախադպրոցական ծրագրի յուրաքնչյուր ծրագրային բաղադրիչի մեջ:Հայրենաճանաչողություն է,երբ խոսում ես հայրենի բնության մասին,էկոլոգիայի մասին,պատմում ես բնանկարը,լսում ես ժողովրդական հեքիաթներ,առակներ ու ասացվածքներ,հաշվում,հանում և գումարում ես մայրենի լեզվով,երաժշտության պարապմունքի ընթացքում սովորում հայրենասիրական երգեր:Նույնիսկ այն փոքրիկ ծաղիկը,որ սանը նկարում է դա այն ծաղիկն է,որն աճում է իր հայրենիքում,իր գյուղի,իր տան բակում:Այս հետազոտական աշխատանքի ընթացքում ես պարզեցի,որ հայրենաճանաչողությունն այն կարողություններից է,որ կարելի է և պետք է զարգացնել դաստիարակության միջոցով:Ես համոզվեցի,որ կազմակերպելով տարբեր էքսկուրսիաներ,այցելություններ,երեխաներին ծանոթացնելով մշակույթի,ավանդույթների,կազ-մակերպելով հանդիպումներ զինվորականների հետ,լսելով նրանց հերոսական սխրանքները երեխաները ոգեշնչվում են ձեռք  են բերում գիտելիքներ պատկերացումներ հայրենիքի,ազգի,բանակի մասին:

Այսպիսով ,գալիս ենք այն եզրակացության,որ հին ու նոր սերունդների արժեքային համակարգերի միջև առաջանում է անդունդ:Նոր սերունդը կտրվում,հեռանում է իր արմատներից,չի նախագծում իր հեռանկարները և ապրում է լոկ ներկայով:ՈՒստի անհրաժեշտ է նախադպրոցական ուսումնական հաստատություններից սկսած լրջագույն մոտեցում ցուցաբերել հայրենաճանաչողության դաստիարակության

խնդիրների լուծմանը:Ստեղծված իրավիճակում միայն հայրենաճանաչողությունը կօգնի դիմակայելու գաղափարական բոլոր արհավիրքներին:

Գրականության ցանկ

.Յու.Ամիրջանյան,Ա.Սահակյան«Մանկավարժ»

.Հ.Հ.ԿԳ.Ն.Ազգային ինստիտուտ«Մանկավարժություն»2012

.Վ.Ա.Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին»

.ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ«Նախաշավիղ» N3 2015

.Նախադպրոցական կրթության Պետական Կրթական Չափորոշիչ-ՀՀ կառավարության 2021թ մայիսի 13-ի N 744-Ն որոշում

Նախադպրոցական  կրթական հիմնական  ծրագիր Ավագ խումբ ( 5-6 տարեկաններ)